Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ

Կ-796[1]-04.12.2020-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 2-ի հողային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետում, 3-րդ հոդվածի 4-րդ կետում, 35-րդ հոդվածի 3-րդ մասում, 48[1]-րդ հոդվածի 8-րդ մասում, 64-րդ հոդվածի 3-րդ մասում, 81-րդ հոդվածի 3-րդ մասում, 83-րդ հոդվածի 5-րդ մասում, 94-րդ հոդվածի 6-րդ մասում, 102-րդ հոդվածի 5-րդ կետում, 118-րդ հոդվածի 4-րդ մասում «հողի հարկը» բառերը համապատասխան հոլովաձևերով, փոխարինել «անշարժ գույքի հարկը» բառերով՝ համապատասխան հոլովաձևերով:

Հոդված 2. Օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերում, 66-րդ հոդվածի 2-րդ մասում «կադաստրային գները» բառերը համապատասխան հոլովաձևերով փոխարինել «կադաստրային արժեքը» բառերով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է նաև 2021 թվականի հունվարի 1-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 2-ի հողային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետում, 3-րդ հոդվածի 4-րդ կետում, 35-րդ հոդվածի 3-րդ մասում, 48[1]-րդ հոդվածի 8-րդ մասում, 64-րդ հոդվածի 3-րդ մասում, 81-րդ հոդվածի 3-րդ մասում, 83-րդ հոդվածի 5-րդ մասում, 94-րդ հոդվածի 6-րդ մասում, 102-րդ հոդվածի 5-րդ կետում, 118-րդ հոդվածի 4-րդ մասում «հողի հարկը» բառերը համապատասխան հոլովաձևերով, փոխարինել «անշարժ գույքի հարկը» բառերով՝ համապատասխան հոլովաձևերով:

Հոդված 2. Օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերում, 66-րդ հոդվածի 2-րդ մասում «կադաստրային գները» բառերը համապատասխան հոլովաձևերով փոխարինել «կադաստրային արժեքը» բառերով ~~Օրենսգրքի 64-րդ հոդվածի 9-րդ, 10-րդ մասերում «տվյալ պահին գործող» բառերը, իսկ 12-րդ մասում «վճարման պահին գործող» բառերը փոխարինել «Կառավարության սահմանած կարգով հաշվարկվող» բառերով:~~

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում~~ 2021 թվականի հունվարի 1-ից~~ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է նաև 2021 թվականի հունվարի 1-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-796[1]-04.12.2020-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի հոդված 2	Նախագծի 2-րդ հոդվածը խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝ «Օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերում, 66-րդ հոդվածի 2-րդ մասում «կադաստրային գները» բառերը համապատասխան հոլովաձևերով փոխարինել «կադաստրային արժեքը» բառերով:»	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի հոդված 3	Նախագծի 3-րդ հոդվածը խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝ «Սույն օրենքն ուժի մեջ է պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է նաև 2021 թվականի հունվարի 1-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա:»	Ընդունվել է:	Ընդունվել է: